Սիսիանի համայնքի ավագանու
2018թ. նոյեմբերի 20-ի թիվ 94-Ա որոշման




Հատկացվող տարածք 567քմ

Սիսիանի համայնքի ղեկավար Ա. Սարգսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

20 նոյեմբերի 2018 թվականի թիվ 95-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի առաջին մասով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի առաջին մասով ու 596-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 11 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման Արամ Մանուկյան փողոց թիվ 2 հասցեի 1780քմ (կադ. համ. 09-006-0108-0040), Սիսական փողոց թիվ 50/1 հասցեի 3266քմ (կադ. համ. 09-006-0108-0037) և Գայի փողոց թիվ 29ա հասցեի 2616քմ (կադ. համ. 09-006-0094-0181) հողամասերը նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ Պաշտպանության նախարարության, բազմաբնակարան բնակելի շենքերի սպասարկման նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

**Համայնքի ղեկավար՝ Ա. Սարգսյան**

2018թ. նոյեմբերի 20
ք.Սիսիան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

20 նոյեմբերի 2018 թվականի թիվ 96-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն որոշումը և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 11 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցի փողոց թիվ 7/1-2 հասցեում գտնվող 300քմ հասարակական կառուցապատման հողամաս ուղղակի վաճառքի միջոցով 528x300=158400 (մեկ հարյուր հիսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ կադաստրային արժեքով օտարել հողամասի գնման նախապատվության իրավունք ունեցող անձ՝ Հարություն Գավրիկի Խաչատրյանին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

**Համայնքի ղեկավար** **Ա. Սարգսյան**

2018թ. նոյեմբերի 20
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

20 նոյեմբերի 2018 թվականի թիվ 97-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԻՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 11 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Աղիտու բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարվող փոփոխությանը և իրավաբանական անձին սեփականության իրավունքով պատկանող 2.25հա (վկ. 18102018-09-0017, կադ. ծածկ. 09-011-0107-0009) գյուղատնտեսական նշանակության վարելահողից 2.1825հա փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների հողեր գործառնական նշանակության:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

**Համայնքի ղեկավար Ա. Սարգսյան**

2018թ. նոյեմբերի 20
ք. Սիսիան

ՍԽԵՄԱ

ՀՀ Սյունիքի մարզ համայնք Սիսիանի գյուղ Աղիտու<<Ա.Ա.Բ.ՊՐՈԵԿՏ>>ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողերից /վարելահող/ Արդյունաբերության ,ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողերի կատեգորիա փոխադրվող 2.1841 հա հողամասի գործառնական նշանակությունը/ արդյունաբերության/

Մ1:5000




ՀՀ Սյունիքի ...
դեպարտամենտի ... վարչության

1 2.1841 հա

| Շրջ. կետի համար | Կոորդինատներ | | Կողմի երկարությունը մ |
|---|---|---|---|
| | X | Y | |
| 1 | 8593273.3834 | 4379798.3001 | 157 62 |
| 2 | 8593350.9268 | 4379935.5223 | 69.79 |
| 3 | 8593420.3751 | 4379928.6517 | 93.83 |
| 4 | 8593467.8579 | 4379847 7173 | 151.30 |
| 5 | 8593386 1202 | 4379720.3930 | 32.66 |
| 6 | 8593353.5511 | 4379722 7635 | 71.43 |
| 7 | 8593383.4412 | 4379787 6428 | 110.57 |
| 8 | 8593273.3834 | 4379798.3001 | |

| | | |
|---|---|---|
| Կատարող | Ստորագրություն | Վարդան Ենգիբարյան<br>անուն,ազգանուն |
| Որակավորման վկայականի | 095<br>համարը | 27.02.2012<br>տրման ամսաթիվ |
| Իրավաբանական անձի | 8811080950<br>պետական գրանցման համարը | <Վ.Կ. Գեո> ՍՊԸ<br>անվանումը |

տրման ամսաթիվ

Ստորագրություն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

20 նոյեմբերի 2018 թվականի թիվ 98-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով և 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 11 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերը բաց մրցույթով վարձակալության տրամադրելու մասին» թիվ 15-Ա որոշման մեջ կատարել լրացում և որոշման հավելվածը լրացնել «228» կետով.

| հ/հ | Հողի տեսակը | Հողի խումբը | Հողամասի ծածկագիրը | Հողամասի մակերեսը հա | Վարձակալության վարձավճարի մեկնարկային գնի չափ 1հա, դրամ |
|---|---|---|---|---|---|
| 228 | անջրդի վարելահող | 3-րդ խումբ | 09-011-111-008 | 3.211 | 3570 |

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

**Համայնքի ղեկավար՝ Ա. Սարգսյան**

2018թ. նոյեմբերի 20
ք.Սիսիան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

20 նոյեմբերի 2018 թվականի թիվ 99-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱՐԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի ա/ և բ/ կետերով, 17-րդ հոդվածի 7-րդ մասով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 11 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել համայնքի ղեկավարի 08 նոյեմբերի 2018 թվականի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Սիսիանի քաղաքային գրադարան» հիմնարկը համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին» թիվ 752-Ա որոշումը:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Սիսիանի համայնքային գրադարան» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
3. Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

**Համայնքի ղեկավար** **Ա. Սարգսյան**

2018թ. նոյեմբերի 20
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

08 նոյեմբերի 2018 թվականի թիվ 752-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱՐԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 24-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածով՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Սիսիանի քաղաքային գրադարան» հիմնարկը վերակազմավորել «Սիսիանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:
2. Սահմանել, որ «Սիսիանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Սիսիանի քաղաքային գրադարան» հիմնարկի իրավահաջորդը և դրա իրավունքներն ու պարտականություններն անցնում է «Սիսիանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտին համապատասխան:
3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ կազմել վերակազմակերպված կազմակերպության կանոնադրությունը և փոխանցման ակտն ու սույն որոշման հետ միասին ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:

**Համայնքի ղեկավար** **Ա. Սարգսյան**

2018թ. նոյեմբերի 08
ք.Սիսիան

*Հավելված*
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2018թ. նոյեմբերի 20-ի թիվ 99-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Սիսիանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Սիսիանի համայնքի ավագանու նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Սիսիանի քաղաքային գրադարան» հիմնարկը համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին» թիվ 99-Ա որոշմամբ «Սիսիանի քաղաքային գրադարան» համայնքային հիմնարկի վերակազմավորման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը, գրանցված ՀՀ պետական ռեգիստրի Սիսիանի ստորաբաժանումում և կողմից, գրանցման թիվ 88.0088, վկայական Բ003995, 20.02.1997թ: Կազմակերպությունը ստեղծվում է առանց ժամկետային սահմանափակման:

1.1 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին» «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.2 Կազմակերպության հիմնադիրը Սիսիան համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս Սիսիանի համայնքի ավագանու (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված համայնքային մարմին հանդիսանում է Սիսիանի համայնքի ղեկավարը, որի ենթակայությանն է հանձնվում Կազմակերպությունը:

1.3 Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.4 Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

1.5 Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.6 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով իր անվանմամբ կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր:

1.7 Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.8 Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ Կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

1.9 Կազմակերպության անվանումն է՝

Հայերեն՝ «Սիսիանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

Ռուսերեն՝'' Сисианская общинная библиотека'' некомерческая организация,

Անգլերեն՝ ''Sisian community library'' non commercial organization:

1.10 Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, քաղաք Սիսիան, Սիսական 44:

## II. ԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Կազմակերպության գործունեության հիմնական առարկան մշակութային գործունեության, բնակչության գրադարանային-տեղեկատվական սպասարկման իրականացնում է, իսկ նպատակը՝ բնակչության գեղագիտական դաստիարակությունն ապահովելը, կրթական համակարգի գործունեությանն օժանդակելը:

2.2 Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) համակարգչային ուսուցման իրականացում,

բ) հասարարական սննդի կազմակերպում,

գ) հանգստի օրերին և ոչ աշխատանքային ժամերին գրադարանային վճարովի ծառայությունների մատուցում:

Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար (ոչ առևտրային կազմակերպությունը) իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:

2.3 Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

2.4 Համայնքային կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

## III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, դրա լիազորած համայնքային մարմինը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Կազմակերպության լիազորված համայնքային մարմնի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

3.2 Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա/ Կազմակերպության հիմնադրումը,

բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը:

դ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

ե) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը,

զ) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

ը) Կազմակերպության կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և

պաշտոնային դրույքաչափերի սահմանումը:

3.3 Լիազորված համայնքային մարմինը (Սիսիանի համայնքի ղեկավար)՝ իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

***Սիսիանի համայնքի ղեկավարը՝***

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

ը) հաստատում է Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը,

թ) իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

3.4 Կազմակերպության գործադիր մարմինը.

ա) Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված համայնքային մարմինը՝ Սիսիանի համայնքի ղեկավարը: Կազմակերպության տնօրենն օրենքով, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի, Հիմնադրի կամ լիազորված համայնքային մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

բ) Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է լիազորված համայնքային մարմնի ղեկավարը՝Սիսիանի համայնքի ղեկավարը:

գ) Կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:

դ) Կազմակերպության տնօրենը պետք է ունենա մասնագիտական բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

ե) Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար:

զ) Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, լիազորված համայնքային մարմնի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չեն կարող

ենթարկվել պատասխանատվության:

3.5 Կազմակերպության տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

բ) ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր,

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

զ) կատարում աշխատանքի բաշխում տեղակալների միջև,

է) սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում լիազորված համայնքային մարմին,

ժ) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

## IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

4.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

4.2 Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

4.3 Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

4.4 Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

4.5 Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

4.6 Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ Սիսիանի համայնքապետի որոշմամբ:

Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ Հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները

Կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում եմ Հիմնադրի սեփականությունը:

4.7 Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

4.8 Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

4.9 Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն է հանդիսանում ՀՀ պետական և Երևանի բյուջեներից հատկացումները, ինչպես նաև վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված և օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցներից, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումներից և հանգանակություններից, տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների կրթամշակութային և ուսումնական գործունեության տրամադրած դրամաշնորհներից:

Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջև կազմումեննրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդը:

4.10 Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Հիմնադրի կողմից լիազորված համայնքային մարմինը:

4.11 Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

## IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

5.2 Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

## VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1. Համայնքային Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Համայնքային Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

6.2 Համայնքային Կազմակերպությունը լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է Սիսիան համայնքի բյուջե:

6.3 Համայնքային Կազմակերպության լուծարման դեպքում գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար  Վ.Միրաբյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

20 նոյեմբերի 2018 թվականի թիվ 100-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՈՒ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 11 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Տալ համաձայնություն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրին Սիսիանի համայնքի կողմից մասնակցության հայտ ներկայացնելու առաջարկությանը:
2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրին մասնակցության հայտ ներկայացնելու նպատակով ստեղծել նախաձեռնող խումբ՝ համաձայն հավելվածի:
3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

**Համայնքի ղեկավար** **Ա. Սարգսյան**

2018թ. նոյեմբերի 20
ք.Սիսիան

*Հավելված*
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2018 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 100-Ա որոշման

# ԿԱԶՄ

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ*

1. Արթուր Սարգսյան - Սիսիանի համայնքի ղեկավար ,
2. Վարդան Իվանյան - Սիսիանի համայնքի ղեկավարի տեղակալ,
3. Սիմոն Հովհաննիսյան – Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ,
4. Լիլիթ Հարությունյան - Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և սոցիալ-տնտեսական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ,
5. Գարեգին Բաղդասարյան - «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն,
6. Էդգար Հովհաննիսյան - Սիսիանի համայնքի ավագանու անդամ,
7. Կարինե Դավթյան – «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ի նախագահ,
8. Սուրեն Խուդավերդյան – ՓՄՁ ԶԱԿ Սյունիքի մարզի Սիսիան մասնաճյուղի տնօրեն,
9. Գեղամ Օհանյան – Նժդեհ բնակավայրի վարչական ղեկավար,
10. Վահան Ղազարյան – Շաքի բնակավայրի վարչական ղեկավար ։

Աշխատակազմի քարտուղար Վ. Միրաքյան